որի վրա կարելի կը լինի կառուցանել համալսարանի շէնքը։

Փետրվարի 19-ի օրը մենք ամենքս պէտք է տօնենք արժանաւոր կերպով. այդ պատճառով մենք կարծում ենք որ Թիֆլիսի Դուման չէր կարող այդ անմոռանալի օրը աւելի արժանաւոր կերպով տօնել, քան թէ վերև յիշված վճռով։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

—

Վերջին ռուս-Թիւրքաց պատերազմից յետոյ հայերի և Հայաստանի համար մի նոր ոսկեայ դար է սկսվել։ Զարհուրելի, արիւնով շաղախված զոհերը, որ տարաւ հայերից այդ պատերազմը, գլխաւորապէս Փոքր-Ասիայում, նուիրեցին Հայաստանին մի նոր կեանք, տուին նոր նշանակութիւն և նորա վաղուց մոռացված պատմութեան շքեղ անունը, պատմութեան խորքերից երևան գալով ամբողջ լուսաւոր աշխարհի առջև, գրաւեց բոլոր տէրութիւնների համակրութիւնը։

Հայ անունը, որ լսվում էր միմիայն իբրև պատմական անուն, կենդանի կերպարանք ստացաւ և սկսած Եւրոպայի ամբողջ մասուլից մինչև Թագաւորների և նախարարների սենեակները, գիտութեան հետազօտութիւնների, քաղաքական հարցերի, տէրութիւնների միմեանց մէջ ունեցած յարաբերութիւնների առարկայ դարձաւ։

Այդ է պատճառը, որ այժմ հայոց անունը ծանօթ է ամենքին, նորա պատմութիւնը ընդհանուր գիտութեան իրաւունք է ստացել, և հայը գլուխը բարձր՝ ամենայն շրջանում վեհանձնութեամբ կարող է ասել. ես հայ եմ։

Ուրեմն չը պիտի ցաւենք, որ այդ նախանձելի վիճակին հասնելու համար, հայոց ազգը մեծ զոհեր է տուել, գիտենալով որ ամենայն մի այդպիսի երևելի քայլ պատմական ազգերի կեանքում, միշտ մեծ զոհեր է պահանջում, և եթէ կրկին մեր ազգի առաջադիմութեան համար նոր զոհեր պահանջվին, թող գնան այդ զոհերը ևս ազգի յառաջադիմութիւնը պսակելու, նորա վիճակը աւելի ապահովելու համար....

Բայց ի՞նչ է գլխաւոր պատճառը, որ ասիական ազգութիւնների շարքում հայոց ազգը ամենից աւելի կարողացաւ գրաւել բոլոր լուսաւոր տէրութիւնների համակրութիւնը։ Այդ մեր ազգի ձգտումն է դէպի առաջադիմութիւնը և նորա ընդունակութիւնը ոչ թէ միմիայն իրան լուսաւորել, այլ և լինել գլխաւոր գործիչ լուսաւորութեան ճառագայթները տարածելու համար մնացած ասիական ազգութիւնների մէջ։

Եւրոպան արդէն մի երևելի և ուղիղ գաղափար ունի կազմած հայերի մեծ կոչման մասին Ասիայում։ Համարեա բոլոր տէրութիւնները հասել են այն եզրակացութեանը, որ Փոքր-Ասիան կը պատկանի վերջը այն տէրութեանը, որից հայերը աւելի կը լինեն համակրված....

Ո՞ր հայի սիրտը չը պէտք է ուրախանայ որ իր ազգի վիճակը հասել է այդ նախանձելի աստիճանին։ Ի՞նչ քարեսիրտ, տխմար հայ պիտի լինի այն հայը, որ գիտենալով թէ, Հայաստանի փրկութեան և առաջադիմութեան գլխաւոր միջոցը լուսաւորութիւնն է, ուսումը—չը տայ իր լուման հայերին և Հայաստանի մէջ լուսաւորութիւնը ծաւալելու նպատակով։ Ամեն լաւ հայի համար, որին թանգագին է իր հայրենիքի պատիւը, ուրեմն և իր անձի պատիւը, սրբազան պարտք է անդադար օգնել այն ընկերութիւններին, որոնց առաջինն է, Ի՛ հարկէ, «Արարատեան» ընկերութիւնը և այն անձանց, որոնց գործունէութիւնը նուիրված է ազգի լուսաւորութեանը և առաջադիմութեանը։

Ինչպէս յայտնի է լուսաւորութեանը նպաստում են ոչ թէ միմիայն ուսումնարանները, այլ և գլխաւորապէս—գրականութիւնը։ Այս վերջինի մի մասը՝—լրագրութիւնը, գործում է իբրև ազգային լուսաւորութեան գլխաւոր, իբրև հասարակութեան ձայն, որը ամեն տեղ լսվում է և որը ժամանակիս պահանջներ յայտնելով, ստիպում է ամենքին խոնարհվել իր դէմ։

Հայերը պարտաւոր են և պիտի ունենան, ինչպէս բոլոր լուսաւոր ազգերը, իրանց ձայնը ներկայ քաղաքականութեան մէջ և այդ ձայնի ներկայացուցիչը կը լինի, ուրեմն, հայոց լրագրութիւնը։ Սորանից մի քանի տարի առաջ թէ Ռուսաստանում և թէ այլ տէրութիւններում, հազիւ թէ գիտէին անգամ հայոց լրագրութեան գոյութեան մասին։ Բայց այժմ հայոց լրագրութեան ձայնը ամենայն տեղ լսվում է և հայոց լրագիրների յօդուածները և տեղեկութիւնները առատ նիւթեր են տալիս թէ Ռուսաստանի և թէ բոլոր Եւրոպայի լրագիրներին։

Այդ ևս սակաւ պատիւ չէ հայոց ազգին. բայց ցաւալին այն է, որ դեռ ևս հայոց լրագրութեան վիճակը ապահովված չէ նիւթական կողմից։ Եւ եթէ մեր լրագրապատներին անձնանուիրութիւնը չը լինէր, Կովկասի ոչ մի լրագիր և օրագիր չէր կարող շարունակել իր գործունէութիւնը։ Այլազգերի լրագիրները 10 հազարներով և աւելի օգուտ են քաղում, իսկ մեր լրագիրները միայն դեֆիցիտ են տալիս։

Եթէ հայերը կամենում են պահպանել իրանց անուան պատիւը, թող պահպանեն և իրանց լրագրութիւնը։

Հայ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

15 յունվարի

Շուշուց երեսուն և հինգ վերստ հեռաւորութեամբ դէպի արևելք գտնվում է Աղդամ գղեակը, որ զարաբաղցիներին յայտնի է իր կլիմայական բազարներով և պտղաբեր այգիներով։ Նախ ընթերցողին մի քանի տեղեկութիւններ կը տամ այս բազարի վրա, որին վերջի անգամս ես ևս անձամբ ներկայ էի և ապա կը խօսեմ այնտեղի այգիների վրա։

Աղդամ գղեակն իր դիրքով և յարմար ու ուղիղ ճանապարհներով կենտրոն է կազմում Ղարաբաղի շատ գիւղերի համար։ Շուշուց նոյնպէս ուղիղ, փստի ճանապարհով, կարելի է գնալ այդ գղեակը։ Աղդամը պատկանում է, երբեմն Ղարաբաղին տիրապետող, այժմեան իշխան Մեհտի-Ղուլի խան Ուցմիևին։ Մինչև այժմ այստեղ մընում է նորա այսպէս ասած «ամարաթը», ուր խանը տարվայ շատ ժամանակը անց էր կացնում։ Մի մեծ հրապարակ, որի մէջ տեղը չինված է մի քարվանսարայ և որի չորս կողմից բաժանվում են մի քանի ճանապարհներ դէպի զանազան կողմեր, ներկայացնում է Աղդամի բազարի տեղը։ Բազարը լինում է ամենայն կիրակի օր և ըսկսվում է առաւօտից շատ վաղ և շարունակվում է մինչև երեկոյեան ժամը 5-ը։ Արդէն շաբաթ օրը և բոլոր գիշերը սայլակների, ֆուրգոնների ճըռճռոցներ, ձիաների խրխնջոցներ, մարդկերանց աղաղակներ են, որ թնդացնում են օդը։ Շաբաթ գիշերը, կարծես, այդ հրապարակը լուսաւորված լինի։ Կիրակի առաւօտն էլ մարդ չէ կարողանում այդ հրապարակումը աղատ կանգնել. ինչպէս ասում են ոեթէ ասեղ գցես, տափը չի ընկնիլ։ Ցորենի, գարու, կորեկի, զանազան տեսակ պաչարեղենների և մրգերի հակեր են, որ լցնում են կիրակի օրը այդ հրապարակը։ Դամի 10—2-ը ըսկսում է սասկանալ առևտուրը, այս ժամանակը ազէ չունը իր տերօջ չէ ճանաչում. մէկը ամենայն արագութեամբ իր առած պաչարեղէններն է սայլակներում դարսում, միւսը մի բան է կշռում, երրորդը փողեր համարում և այլն և այլն։ Մի կողմից էլ այդիների երգելը, թիւրքերի կանանց զալմաղալը, գիւղացիների կռիվները ապրանք գնողների հետ, մի անկարագրելի տեսարան է ներկայացնում։

Սասակի թանգութիւնը այստեղ էլ էր սփռել իր ճիւղերը։ Բոլոր ուտելիքները իրանց գներից եռապատիկ բարձրացել էին։ Գիւղացիք մի առանձին ուրախութեամբ պատմում էին, որ ոչ մի ժամանակ այս բազարումը սոյն օրինակ թանգութիւն չէին լսած և այսպիսի մեծ աշխատանք երբէք չէին ստացած։ Ահա այս էր մեզ զարմացնում, որ գիւղացիք փոխանակ ցորենի պակասութեան վրա գանգատվելու ծիծաղում էին չուչեցիների վրա և ուրախանում, որ նրքա այնպէս առատօրէն վարձատրում էին նոցա։ Արդէն հոկտեմբերի վերջերում ցորենի ջուալը (7 պուդ) ծախվում էր այնտեղ 18—20 ր., գարու (5 պուդ) ջուալը 9 ր., կորեկի (5 պուդ) 12 ր. և այն և եթէ այսպէս շարունակվէր գարնանը, այս գները պիտի եռապատկվէին անպատճառ։ Այս յուսով էին նոյնպէս մեր կալուածատէրերը, որոնք չը բաւականանալով իրենց ունեցած ցորեններով, սկսել էին գիւղից գիւղ թափառելով և գները թանգացնելով ցորեան առնելու։

Այժմս էլ մի քիչ խօսենք Աղդամ գիւղի և նրա այգիների վրա։ Աղդամ գիւղը իր բազարից գտանվում է երկու վերստի հեռաւորութեամբ։ Գիւղացիների մեծ մասը բնակվում է իր այգիների մէջ չինած խրճիթներում, որոնք երկայն տարածութեամբ չարված, գիւղի շարունակութիւնն են կազմում։ Այս գիւղի բնակիչները բոլորն էլ թիւրքեր են և պարապում են այգեգործութեամբ և երկրագործութեամբ, անասնապահութիւնը սոցա մէջ տեղի անյարմարութեան պատճառաւ այնքան ծաղկած չէ։

Այգիները բաւականին կանոնաւոր կերպով տընկած են և մէկը միւսից բաժանվում են լայն ճանապարհներով, որոնց երկու կողմերով չորդողով վազում են փոքրիկ առուակներ, զարդարուած գեղեցիկ ուռենիներով կամ թզենիներով։

Ղարաբաղու այգիների թիւը, ինչպէս ասում են, հասնում է 20000 բայց հազիւ թէ այդ թիւը ճիշտ լինի և ափսոս, որ դժուար և մինչև անգամ անկարելի է ասել, թէ տարեկան այդ այգիներ որքան արդիւնք են տալիս։ Առհասարակ այս այգիները միմեանցից շատ զանազան մեծութեամբ կամ փոքրութեամբ են լինում և երկրորդ ամեն կողմի խաղողներից գինի կամ արաղ միանաւասար չէ դուրս գալիս. մէկ կողմի խաղողի երկու պուդիցն է մէկ կուժ գինի դուրս գալիս, միւս կողմի երեք կամ չորս պուդից և այլն։ Գինին ծախվում է գիւղում կուժը 2—3 ր., իսկ քաղաքումը 3—5 ր.։ Աղդամումը խաղողը նոյնպէս շատ էժան գներով էր ծախվում։ Սկզբումը պուդը արժէր 15—20 կ., յետոյ հասաւ մինչև 50 կ.։ Խաղողի այսպիսի էժանութիւնը կարելի է նրանով բացատրել, որ այդիների մեծ մասը պատկանում են թուրքերին, որոնք ոչ թէ իրանց խաղողներից գինի չեն պատրաստում, այլ մինչև անգամ մեղք էլ են համարում հայերի վրա իրանց այգիների երեսն էլ ծախել և թոյլ տալ նոցա այնտեղ գինի պատրաստելու, այլ իրանք խաղողը քաղում են և այգեպէր հայերի վրա այսպիսի չնչին գներով ծախում։

Այս տարի Ղարաբաղի գաւառը արաղի համար տէրութեան մաքս տուել է մօտ 100,000 ր. և եթէ հաշուենք, որ օրէնքի համաձայն մի վեդրօին պէտք է տալ մաքս 25 կ., ուրեմն պէտք է Ղարաբաղը այս տարի 400,000 վեդրօ արաղ լինի տուած, բայց այս թիւը նոյնպէս չէ կարող ճիշտ լինել, փոխանակ վեդրօին 25 կ. տալու, դուրս է գալիս 50 կ.։ Ուրեմն միջին թւով 200—300 հազար վեդրօ արաղ Ղարաբաղի այգիները այս տարի անպատճառ պէտք է տուած լինեն։

Ահա երկու երեք տարի է, որ մի երկու չուչեցի պարոններ Եւրոպայից մեքենաներ են բերել տուել ու բացի թթից և խաղողից ուրիշ զանազան մրգերից էլ են սկսել սպիրտ քաշել։ Ցուսով ենք որ՝ մեր չուչեցի վաճառականները, տեսնելով վաճառականութեան պտուղները, այսուհետև երբեմն երբեմն էլ ուշ կը դարձնեն և այսպիսի օգտաւէտ պարապմունքների վրա, որոնք երկպատիկ աւելի օգուտ կը տան, քան թէ վաճառականութիւնը, որ գրեթէ ոչինչ օգուտ չէ տալիս և չատերին էլ սնանկութեանը հասցրեց։

Լսում ենք, թէ մի քանի պարոններ մտադիր են մի ընկերութիւն կազմել և կանոնաւոր կերպով երկրագործութեամբ և այգեգործութեամբ պարապել։ Մենք դեռ չենք հաւատում, թէ այս լուրը ճշմարիտ լինի։ Եթէ ճիշտ է մեր խօսքը, չը նորհաւատում ենք այդ պարոններին և ցանկանում ենք կատարեալ աջողութիւն այդ օգտաւէտ և գեղեցիկ մտադրութիւնը իրագործվելու համար։

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Ախալցխա 14 փետրվարի

Ահա ուղարկում ենք ձեզ 371 ր., որ հաւաքեցինք Վանայ սովելոց օգտին մեր պատուելի ազգայիների օժանդակութեամբը, որոց յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը։

Պ. խմբագիր, խնդրեմ բարեհաճէք յիշեալ գումարը հասցնել պատկանելոյն և ձեր պատուական թերթի մէջ տպագրել նուիրատուների անունները։ Ուղարկված գումարից 100 ր. յանձնվեցաւ մեզ ազգատաց դանձանակի հոգաբարձութիւնից և 20 ռուբլ հաւաքեցաւ կօպէկներով։ Ստորագրութիւնը չարունակվում է։ Նուիրատուների անունները. Եղբայրք Մուխաֆենանք 20 ր., Ց. Դեղամեանց 20 ր., Վ. Յերմազեանց 5 ր., Կ. Յակոբջանեանց 5 ր., Գ. Պուղաղեանց 5 ր., Մ. Ռաբակեանց 5 ր., Գ. Նիկողոսեան 5 ր., Գ. Ջարակեանց 5 ր., Ն. Ալբերթեանց 5 ր., Պ. Հունուզեանց 5 ր., Գ. Սաղաթելեանց 3 ր., Մ. Ալանեանց 3 ր., Մ. Սիրունեանց 3 ր., Բ. Պոզոեանց 3 ր., Ց. Ազնաուրեանց 3 ր., Մ. Ց. Սոլանեանց 3 ր., Նուիրատու ոմն 3 ր., Մ. Սամուէլեանց 3 ր., Գ. Ղալամքարեանց 3 ր., Կ. Քոչճեանց 3 ր., Մ. Յովհաննէս Յակոբջանեանց 3 ր., Բ. Արապաճեանց 2 ր., Ոմն 2 ր., Դ. Վանցեան 2 ր., Ց. Ճարակեանց 2 ր., Ս. Ցարոյեանց 2 ր., Հայասէր ոմն 2 ր., Դ. Մելքոնեանց 2 ր., Գ. Վարդանեանց 2 ր., Ց. Թէհմիշճեանց 2 ր., Ղ. Քուբալեանց 2 ր., Ա. Սարայտարեանց 2 ր., Ա. Քհ. Ղազարեանց 2 ր., Ոմն 1 ր., Կ. Մանուկեանց 1 ր., Ց. Քացաղեանց 1 ր., Ս. Ռաբեանց 1 ր., Կ. Սրապեանց 1 ր., Մ. Գիւլեանկեանց 1 ր., Մ. Ղազարեանց 1 ր., Ա. Ջարչեանց 1 ր., Ց. Ղազարեանց 1 ր., Ս. Ջարխճեանց 1 ր., Ոմն Ի. ր., Թ. Լամիրեանց 1 ր., Գ. Սառաֆեանց 1 ր., Հ. Պուլղուրեանց 1 ր., Ց. Բեժանեանց 1 ր., Ս. Սահակեանց 1 ր., Մ. Թ. Մնացականեանց 1 ր., Թ. Ջարոյեանց 1 ր., Ա. Մանուկեանց 1 ր., Ղ. Քհ. Պաղլուտնի 1 ր., Կ. Սիրունեանց 1 ր., Հ. Մարկոսեանցն 1 ր., Ա. Սալամեանց 1 ր., Մ. Ջարքարեանց 1 ր., Ն. Այանեանց 1 ր., Գ. Մ. Ղազարեանց 1 ր., Մ. Շիրինեանց 1 ր., Ց. Աղանեանց 1 ր.. Միրաքով 1 ր., Ռ. Քրիստոստուրեանց 1 ր., Ց. Բեժանեանց 1 ր., Մ. Պետրոսեանց 1 ր., Ս. Ցարութիւնեանց 1 ր., Մ. Գէորգեան 1 ր., Ց. Շիրինեանց 1 ր., Կ. Մարուքեանց 1 ր., Գասպարեանց 1 ր., Ա. Պապոյեանց 1 ր., Պ. Մ. Օսկանով 1 ր., Կ. Բաղոյեանց 1 ր., Ց. Շիրինեանց 1 ր., Մ. Թամբաչեանց 1 ր., Ա. Շիշ-Յակոբեանց 1 ր., Գ. Այվազեանց 1 ր., Կ. Թոմիկեանց 1 ր., Ց. Սարոյեանց 1 ր., Ն. Մորլեանց 1 ր., Ն. Արելեանց 1 ր., Ց. Շեկոյեանց 1 ր., Ղ. Սամուէլեան 1 ր., Գ. Ջեչմաճեանց 1 ր., Ա. Պապչիմեանց 1 ր., Ս. Ամարեանց 1 ր., Ս. Նազարէթեանց 1 ր., Ե. Մնացականեանց 1 ր., Մ. Ադամբէկեանց 1 ր., Մ. Թ. Ադաճանեանց 1 ր., Վ. Սիրականեանց 1 ր., Թ. Ջելինկարեանց 1 ր., Գ. Ռաչմաճեանց 1 ր., Ս. Ֆէնէռճեանց 1 ր., Ս. Ալէքսանեանց 1 ր., Ց. Ադապապեանց 1 ր., Ց. Թաչատուրեանց 1 ր., Ե. Տէր-Գրիգորեանց 1 ր., Ա. Հայրապետեանց 1 ր., Ա. Մխիթարեանց 1 ր., Գ. Չէպէճեանց 1 ր., Մ. Ենօքեանց 1 ր., Մ. Տ. Ստեփանեանց 1 ր., Ց. Ղանդլեանեանց 1 ր., Ս. Մալիասեանց 1 ր., Մինասեանց 1 ր., Վ. Տէր Գրիգորեանց 1 ր., Ց. Զօրանեանց 1 ր., Թ. Սլիկեանց 1 ր., Ց. Յակոբջանեանց 1 ր., Ն. Սողոմոնեանց 1 ր., Մ. Ցարսեանց 1 ր., Ա. Սրապեանց 1 ր., Գ. Ջարխճեանց 1 ր., Ց. Սարգսեանց 1 ր. Կ. Ալէքսանեանց 1 ր., Բ. Անխօսմեանց 1 ր., Ն. Տօնականով 1 ր., Պ. Կարապետեանց 1 ր., Թ. Ղասապպաչեանց 1 ր., Ղ. Տէր-Մարգարեանց 1 ր., Մ. Քրիստոստուրեանց 1 ր.. Թ. Լաղարեանց 1 ր., Մ. Մովսէսեանց 1 ր., Եղանեանց 60 կ., Ս. Աղապապեանց 50 կ., Ց. Բարսեղեանց 50 կ., Ն. Մարուքեանց 50 կ., Թ. Ջէչմաքեանց 50 կ., Պ. Ղազանճեանց 50 կ., Տ. Ֆարմանեանց 50 կ. Մ. Փաշանց 50 կ., Ց. Դիւշեուկեանց 50 կ., Գ. Մկրտչէլեանց 50 կ., Թ. Տէր-Մկրտչեանց 50 կ. Թ. Ենկոյեանց 50 կ., Ցովակիմեանց 40 կ., Ս. Մէնէնտեանց 40 կ., Ա. Մ. Յոհաննիսեանց 40 կ.. Ս. Վիրապեանց 40 կ., Թաչատուր ոմն 30 կ., Թ. Քեշիշեանց 35 կ., Հ. Մարկոսեանց 15 կ.

կ., ամն 50 կ., Կ. Գասպարեանց 1 ր., Մաքոզեանց 1 ր., Անանա Մուրատֆեանց 10 ր., Եղիսաբեթ Ղազարեանց 2 ր., Աղքատաց գանձանակից 100 ր., կոպէկներով հաւաքված 20 ր., Լոնդոնէն 371 ր.»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Թիֆլիսաբնակ պ. Վ. Ա. Վարդանեանից ստացանք 100 ռուբլի յօգուտ Վանի սովատանջեալներին։ Այդ գումարը միւս փողերի հետ կը հասցնենք կ. Պոլիս, որպէս զի Վանի յանձնաժողովին հասցնվի։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը փետրվարի 16-ի նիստին Թագաւոր Կայսրի 25 ամեայ յոբելեանը արժանաւոր կերպով տօնելու համար, ի միջի այլոց վճռեց նուիրել 100,000 ռուբլ, եթէ Թիֆլիսում հիմնվի Կովկասեան համալսարան և բացի այդ գումարը համալսարանի չինութեան համար հարկաւոր եղած հողն էլ ձրիապէս տալ։

—

Տիկին Սրբուհի Երիցեանց խնդրում է մեզ տպել հետեւեալը։ «Թիֆլիսաբնակ տիկնայք և օրիորդք համակրելով Կ. Պոլսի Ազգանուէր Հայուհեաց ընկերութեանը, որի նպատակն է հայ լեռկան սեռի մէջ ուսումն տարածել, յունվարի 27-ին յօժարութեամբ ստորագրութիւն բացին և ժողովեցաւ 407 ռուբլ, որ գումարը քաղաքիս առևտրական բանկի ձեռքով ուղարկվեցաւ Կ. Պոլսի Ս. Պատրիարքին, յիշեալ ընկերութեանը հասցնելու համար։ Խնդրեմ ձեր պատական լրագրի մէջ տեղ շնորհէք այս երկտող գրութեան և նուիրատու տիկիններն և օրիորդների ցուցակին»։ Ուրախութեամբ տպում ենք տիկնոջ այդ նամակը, բայց ցաւում ենք որ չենք կարող տպագրել մեր լրագրի էջերում նուիրատուների ազգանունները։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են։ «Մուրմալուի գաւառի մէջ զետեղված Թիւրքիայի հայ գաղթականները չը գտնելով ոչ ապրուստ և ոչ կերակուր, ցրրոից և քաղցածութիւնից յուսահատ հառաչելով մնանում են։ Փորձ փորձվեց թշուառներին օգնելու նուիրատուութեան ստորագրութիւն բաց անելով, բայց խեղճերի բաղդից այդ ստորագրութիւնն էլ չաջողվեցաւ»։

—

ԻԳԴԻՐԻՑ մեզ գրում են, որ շատ տարիներ Արարատեան դաշտը ներկայ ձմեռվայ պէս մի ցուրտ ձմեռ չէ տեսել։ Բայց փետրվարի սկզբներում եղանակը փոքր ինչ մեղմացաւ։ Թղթակիցը ասում է որ պտղատու ծառերից շատերը ցուրտ խաչել է։

—

Փետրվարի 17-ին, երեկոյեան ժամը 9-ին կրակ ընկաւ Թիֆլիսի Դվորցովի փողոցի վրա գտնվող Սարաջևի տան խանութներից մէնի մէջ։ Այն օրը կիրակի լինելով, բոլոր մագազինները փակած էին։ Հրաշէջ վարչութիւնը շուտ հասաւ, բայց արդէն կրակը, որ ներսից էր սկսվել, պատել էր ամբողջ տունը։ Սարաջևի մյարկանի տունը կարելի էր ոչնչացրած համարել։ Շինութիւնը գրեթէ բոլորովին քանդված է։ Հրաշէջ վարչութիւնը շատ լաւ էր գործում։ Պէտք է զարմանալ թէ ինչպէս յաջախ են կրկնվում հրդեհները մեր քաղաքում։ Հրդեհի ժամանակ մի բոպէն շատ վտանգաւոր էր, երբ Սալամբէկովի գինուորական առարկաների մագազինում գնտակները սկսեցին ճայթել։ Դիմացը գտնվող Արծրունու գալանտէրեան մի քանի բոպէ փանդի մէջ էր գտնվում։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են, որ թէպէտ քաղաքում լապտերներ կան, բայց նոքա հազիւ են կարողանում իրանց չորը լուսաւորել։ Թատրոնասէրները մտադիր են ներկայացնել «Արշակ II» ողբերգութիւնը և յետոյ դարձեալ կրկնել «Շուշանիկ», որովհետև այստեղ ուրիշ պիեսաներ չը կան։

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ, որ փետրվար ամսի 7-ին տուել են այնտեղ «Մարդ. ընկ.» դահլիճում «Թուղթ խաղացողի կնիքը» և Մոլիերի «Բարբուլիէ»։ Ներկայացումը անցել է յաջող։ Այնարկանեներից մէկում պ. Վարդազարեանցը երգել է Տրովատորից մի կտոր № 9։ Հասարակութեան ծափահարութիւնը կրկնել է տուել այդ կտորը։ Ներկայացման մասնակցողները շնորհակալութեան արժանի են։ Մանաւանդ աչքի էին ընկնում տիկին Արզումանեան, պ. պ. Պողոսեան, Զալարեան, Մովսէսեան (բժշկի դերում)։ Ներկայացումն տրված է բագնում թատրոնի հիմնելու օգտին—այս անգամ յատուկ դեկորացիաների ծախսը հանելու համար։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են, որ փետրվարի առաջին օրերում սաստիկ ձիւն է եկել։ Ձիւնը փողոցների վրա երկու արշին բարձրութեամբ է գրվել։ Բացի այդ սաստիկ քամիներ են եղել։ Ճանապարհորդները պատմում են, որ այդ քամին եղել է նոյնպէս Շամախի, Նուխի, Ջաքաթալա և ուրիշ տեղեր։

—

Պ. Տէր-Գրիգորեանը խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Իմ հեղինակած «Վէպեր» գրքի օրինակները արդէն ուղարկեցի գրքի գաւառական բոլոր բաժանորդներին այն պարոնների հասցէով, որոնք բարեհաճել էին ստորագրութիւն հաւաքել գրքիս համար։ Յայտնելով այդ պարոններին իմ շնորհակալութիւնը, խնդրում եմ ինձ տեղեկութիւն տալ եթէ մէկը նրանցից չը ստանայ գրքերը, կամ թերւոյ պակաս ստանայ։ Իրաքանչիւր կապոցի մէջ պարոնները կը գտնեն գրքի բաժանորդական ցուցակը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«TEMPS» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

—

«Ես միշտ առիթ եմ ունեցել ցոյց տալու այն նիւթական և բարոյական վնասները, որոնց ենթարկվել է Թիւրքայ կառավարութիւնը իր գործակատարների մեծամասնութեան սխալմունքների և անպէտութեան շնորհիւ։ Կարծես այս բաւական չէ, միւս կողմից էլ կիսապաշտօնական մամուլն իր գործը եռանդով պաշտպանելու պատրուակով մեծամեծ շփոթմունքներ է պատճառում կառավարութեանը։ Օրինակ, վերջին ժամանակներս, նա մի այնպիսի կատաղութեամբ էր յարձակվում Անգլիայի դէմ, որ էլ չափ ու սահման չէր մնում։ Այսօր էլ «Վաքիտ» լրագրին է հանդէս դուրս եկել, որը հայոց «Թերջեմանի-Էֆքեար» (մտքի թարգման) լրագրում տպված մի լուրի առիթով, ցաւալի աղմուկների պատճառ դարձաւ։

«Թերջեմանի-Էֆքեար» լրագիրը յայտնել էր, որ Վանի նահանգում գիւղացի երեք հայեր են սպանվել, որոնց գլխակները սպանելուց յետոյ մաս-մաս կտրել են։ Այս բանի առիթով «Վաքիտ» լրագիրը մի յօդուած է հրատարակել, որի մէջ նա մեղադրում է հայոց օրդանին, ասելով, որ նա կամենում է երկպառակութիւն ու անբաւականութիւններ սերմանել։

«Թերջեմանի-Էֆքեար» համոզված լինելով, որ իր հաղորդած լուրը ճշմարիտ է, բողոքից ուղղիչ դատարանի առաջ, և բողոքեց «Վակիտ» լրագրի դէմ, մեղադրելով նրան, որ նա հաւաստի լուրերն ապաւաղում է։ «Վակիտ» լրագիրը յանձնեց իր գործը Գարգուրէֆէնտի անունով մի ասորացի քրիստոնեայ փաստաբանի. այս մարդը շատ լաւ է հասկացել թէ ինչ մեծ ազդեցութիւն ունի դատարութիւն խօսքի նշանակութիւնը Թիւրքայ կառավարութեան գործակատարների վրա։ Որպէս զի տանէ այն վատ գործը, որին նա պաշտպան էր հանդիսացել, նա առաջարկեց դատարանին այս հրէշային պատճառը։ Նրա կարծիքով «Թերջեմանի-Էֆքեար» լրագիրը հայոց մի գաղտնի ընկերութեան օրգան է, որը բոլգարական անցեալ ընկերութիւնների պէս, նոր ապստամբութիւն է պատրաստում։ Գարգուրը հրաւիրեց կառավարութեանը որոնել այս ընկերութիւնը, և այսպէսով առաջն առնել այն փանդի, որ ըսպառնում է նրան։

«Ցաւալին այն է, որ կառավարութեան գործակատարները, փոխանակ ուսերը բարձրացնելու, հաւատ ընծայեցին այս անհիմն մեղադրանքին, որը հերքվում է ամենայն հաւանականութեամբ, և «Թերջեմանի-Էֆքեար» լրագրի տեսուչը և գլխաւոր խմբագիրը կալանաւորվեցան և բանտարկվեցան։

«Միւս օրը հայոց պատրիարքը մի թագաւորական ներկայացրեց պոլսեցիական մինիստրութեանը և խնդրեց, որ արձակեն լրագրապետներին։ Ներսէս սրբազանն անձամբ երաշխաւոր է լինում նրանց, և նկատում է, որ նրանք ճշմարտապէս ծառայել են որչափ Թիւրքայ կառավարութեանը, նոյնչափ և ազգային շահերին։

«Դրեթէ մի և նոյն ժամանակ, տօնների առիթով, պատրիարքարանում տեղի ունեցած ընդունելութեան միջոցին, երբ խօսքն ընկաւ այս գործի վրա, Ներսէս սրբազանը յայտնեց որ «Թերջեմանի-Էֆքեար» լրագրի պատմածը բոլորովին ուղիղ է, և որ պատրիարքարանն իր վրա է առնում այդ լուրի վաւերականութեան պատասխանատուութիւնը։ Արժանապատիւ հովիւը դեռ աւելի հեռու գնացնա ասաց, որ հայոց լրագրի մեղադրված յօդուածները նոյն իսկ պատրիարքարանից են հաղորդված։

Ներսէս սրբազանի այս աշխարայ յայտարարութիւնները և նրա մինիստրներին առաջարկած պաշտօնական խնդիրները առանց հետեւանքի մնացին։ Հայ լրագրապետները դեռ արձակված չեն բանտից։

«Բոլորովին մի յայտնի իրողութիւն է, որ Գարգուրի մեղադրանքը սուտ է։

«Պետութեան բոլոր ազգաբնակութիւններից ոչ մէկը չը կայ, որ այնպէս քիչ յուզվող, որ այնչափ շատ հպատակվող և այնչափ շատ հաւատարիմ լինի, ինչպէս հայ ազգաբնակութիւնը։ Անարդար և այլանդակ բան կը լինէր հայ և բոլգար ազգաբնակութեանց մէջ ամենափոքր նմանութիւն անգամ հաստատել։ Հայերը ուրիշ ոչինչ նպատակ չունեն, բայց եթէ լուսաւորել և դաստիարակել ազգի բաղմութիւնը, մասսան։ Այս նպատակին հասնելու համար, նրանք ոչինչ չեն կեղծում, և բացարձակապէս աշխատում են բազմապատկել ուսման և ուսումնարանական ընկերութիւնների թիւը։ Բայց նրանք ոչ մի կերպով չեն աշխատում փչրել այն հանդոյցները, որ նրանց կապում է կայսրութեան հետ։ (?) Իրանց ապագայ երդների մէջ, նրանք միայն ցանկանում են հայ նահանգների համար ինքնավարութիւն ունենալ, որը նրանց կը մատակարարէր այն բարօրութիւնները, որոնցից այժմ նրանք զրկված են։ Հաւանականաբար նրանց այս համեստ ձգտումը կը ծառայէ ինչպէս հայ հասարակութեան, նոյնպէս և կառավարութեան շահերին։ Ես թախանձապէս կրկնում եմ ասածս, որովհետև սա միակ ճշմարտութիւնն է։ Այս բոպէիս հայկական հարց չը կայ նահանգները Թիւրքիայից բաժանելու մտքով։ Բայց պարզ է, որ եթէ ներկայումս մեզ զրաղեցրած դիպուածները յամառակի կրկնվեն, այն ժամանակ՝ այդ դէպքերն իրանք կը նպաստեն հայ նահանգներից մի անկախ երկիր ստեղծել։

«Բայց ձեր ընթերցողների ուշադրութիւնն այս հետաքրքիր առարկայի վրա աւելի հաստատապէս դարձնելու համար, ես կը բաւականանամ մէջ բերելով այդ հասարակութեան հոգեոր գլխի վերջին յայտարարութիւնները։ Մենդեան տօների ժամանակ, Ներսէս սրբազանը բացատրեց մի առանձին հեղինակութեամբ,—որը նա ստացել է ոչ այնքան իր բարձր դրութենից, որչափ իր կատարեալ անկեղծութենից—ազգի պահանջների ճիշդ բնաւորութիւնը։ Ահա այն ճառի միտքը, որ նա խօսեց իբրև պատասխան, այն բարեմաղթութիւնների, որը ներկայացվեցաւ Նորին Բարձր Սրբազնութեանն ազգային ժողովի նախագահի ձեռքով։

«Պատրիարքն ասաց, որ նա լիայոյս է ազգի ապագայ բարօրութեան մասին, որովհետև այս առթիւ նա օտար պետութիւններից նորանոր հաւաստիութիւններ է ստացել։ Ազգը կը հանի իր նպատակին, որի իրագործումը նոյնչափ հեշտ կը լինի կայսերական կառավարութեանը, որչափ և նոյն իսկ իրան ազգին։ Հայերի պահանջները ոչ մի տեսակետից էլ չեն կարող հակառակվել կառավարութեան շահերին։ Ընդհակառակը, նրանք համաձայն են նրա շահերին։ Եւ յիրաւի ի՞նչ են պահանջում նրանք, եթէ ոչ վերանորոգութիւններ և ամբողջ երկրի բարեւաւութիւն։ Եթէ ազգը բողոքներ է ներկայացնում, դա միայն վատ վարչութեան դէմ է, որից Թիւրք ազգաբնակութիւնն էլ նոյնչափ կեղեքվում է, որչափ և հայ ազգաբնակութիւնը։ Նատ անգամ նոյն իսկ Թիւրքերն իրանք էլ են դիմում պատրիարքարանին, խնդրելով որ նա բողոքէ իրանց կողմից վարչութեան դէմ։ և Նորին Սրբազնութիւն Ներսէսը կարող է իր վաւերացմամբ բողոքագրեր ցոյց տալ, որոնց մէջ հայոց ստորագրութիւնների կողքին, շարված են և Թիւրքաց ստորագրութիւններ։

«Սրանից յետոյ պատրիարքն աւելացրեց հետևեալը. Ես քանիցս անգամ յայտնել եմ թէ մինիստրներին, և թէ Բերլինի վեհաժողովին, որ Հայաստանի պէս մի խառն ազգաբնակութեամբ զետեղված երկրի թշուառութիւններին վերջ դնելու միակ միջոցն այն է, որ տեղական մի այնպիսի ինքնավարութիւն շնորհվի, որ հիմնված լինի շահերի, պարտականութիւնների և իրաւունքների ապահովութեան վրա։ Բայց մենք ոչ մի կերպով չենք ցանկանում բաժանվել օտոմանեան պետութիւնից։ Ուստանք, վստահ լինենք, համարձակ կերպով դիմենք դէպի մեր նպատակը, և յոյս ունեմ, որ Նորին Կայսերական Մեծութեան սուլթանի շնորհիւ մեր արդարացի ցանկութիւնները յաջողութեամբ կը պսակվին—։

«Ներսէս սրբազանը վերջացրեց իր խօսքերը, յորդորելով ազգին յարատև անել իր ջանքերն ու իր զոհողութիւնները յօգուտ ժողովրական լուսաւորութեան գործին։ Նա նոյնպէս ջերմեռանդութեամբ հրաւիրեց ազգի վեհանձն զգայմունքները, և խրախուսեց օգնութեան ձեռք մեկնել այն նահանգներին, ուր ծանրացել է սովը։

«Ձեր թղթակիցը կարող է հաստատել, որ այս ճառը բոլորովին անկեղծութեամբ արտայայտում է հայոց գաղափարները, և բոլորովին բացայայտ կերպով որոշում է ներկայ դրութիւնը։ Նրանք որ հետամուտ են հալածանքների, և աշխատում են սրանից աւել ուրիշ բան որոնել, ոչինչ չեն գտնի։ Հաւանի թէ հարկաւոր լինի այստեղ նկատել հայ լրագրապետների գործի վերաբերութեամբ բռնած ծիծաղելի ընթացքը, որովհետև նրանք իրանց հրատարակութեամբ աշխատել են միայն նպաստել այն վերանորոգութիւններին, որոնց անհրաժեշտութիւնը ճանաչել է պաշտօնապէս նոյն իսկ կառավարութիւնը, և արտակարգ կոմիսէրներ է ուղարկել Փոքր-Ասիա։ Մամուլի ազատութեան տարեթիւը դեռ մօտեցած չէ երևում»։

Վերջին օրերս Կ. Պոլսից հեռագրում են ֆրանսիական լրագիրներին, որ հայոց պատրիարքը և սուլթանը ամենայն ջանք գործ են դնում օգնելու Վանի և Մուսուլի սովալուներին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 փետրվարի։ Թէհրանից հեռագրում են Լօնդօն, որ պարսից շահը Խորասանի բանակի հրամանատար է նշանակել Իշխան Ալիզուլիին, որ պատկանում է այն ընտանիքին, որը տիրում էր Հէրաթին տասն և չորրորդ դարում։ Իշխանի հրամանատարութեան ներքոյ 15,000 զօրք է գտնվում։ Նրան հրամայված է տիրել Հէրաթին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 փետրվարի։ Վաղը, 19 փետրվարի, Ս. Պետերբուրգում գտնված զօրքերի ներկայացուցիչները, բոլոր գեներալներով և օֆիցէրներով կը գումարվին առաւօտեան 9½ ժամին Պալատական հրապարակի մէջ, Թագաւոր Կայսրին ողջունելու համար։ Ցինուորական երաժշտութիւնը կը կատարի ազգային հիմն և Վասիլիևսկի կղզուց ողջոյն կը տրվի, արձակելով 101 անգամ թնդանօթներից։ Երկկ մանեժում զօրահանդէսին ներկայ էին երկու ֆելդմարշալներ՝ Միքայէլ Նիկոլաևվիչ և Նիկոլայ Նիկոլաևվիչ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԲՈՒՆԻ